ՀՀ ՊԵԿ Գործունեության Համառոտագիր

2026 թվական երրորդ եռամսյակ



ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաքելությունն է՝
ապահովել արդար և թափանցիկ հարկային և մաքսային միջավայր, խթանել կամավոր կարգապահությունը և ծառայել քաղաքացիներին ու բիզնեսին՝ հանուն Հայաստանի առաջանցիկ զարգացման:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեսլականն է՝
ՊԵԿ-ը դինամիկ զարգացող և առաջատար կառույց է, որը հայտնի է տեխնոլոգիական համարձակ նորարարությամբ և մարդակենտրոն մոտեցմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱԿԻՐՃ ԳԼԽԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ 2

II. ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 8

1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք 8
2. ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումարներ 9
3. Հարկ վճարողների հաշվառում 10
4. Արտաքին տնտեսական գործունեության ցուցանիշներ 10
5. Գործարքների փաստաթղթավորման ցուցանիշներ 11
6. Եկամուտ ապահոված աշխատատեղերի վերաբերյալ ցուցանիշներ 11
7. Հարկային հսկողության դրվագներ 12
8. Մաքսային հսկողության դրվագներ 15
9. Բողոքարկումներ և ստացված հարցադիմումներ 15
10. Հարկային և մաքսային վարչարարության դրվագներ 16
11. Ծառայողական քննություններ 17
12. Ուսումնական ծրագրեր 17

III. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 18

1. Տնտեսական ակտիվություն 18
2. Հարկերի համադրություն տնտեսական ակտիվության հետ 19

IV. ՀՀ ՊԵԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 20


ՀԱՎԵԼՎԱԾ՝ ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 22
2. Եվրասիական տնտեսական միության օրենսդրության նորություններ 55

2.1 Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներ 55

2.2 Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումներ 60

I. Հակիրճ գլխավորի մասին




2026թ.-ի 3-րդ եռամսյակում ՊԵԿ գործունեությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են Բաժին II-ում:



2026թ.-ի 3-րդ եռամսյակում ՊԵԿ գործունեությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են Բաժին II-ում:




2026թ.-ի 3-րդ եռամսյակի արտաքին առևտրի ցուցանիշները ներկայացված են Բաժին II-ի 4-րդ կետում, մաքսային հսկողության ցուցանիշները՝ 8-րդ կետում:



2026թ.-ի 3-րդ եռամսյակում ՊԵԿ գործունեությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են Բաժին II-ում:

ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) ակտիվորեն զարգացնում է երկկողմ և բազմակողմ համագործակցությունը՝ ուղղված մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, հարկային վարչարարության կատարելագործմանը և կադրային կարողությունների զարգացմանը:



2026թ.-ի 3-րդ եռամսյակում ՊԵԿ միջազգային համագործակցությունը ներկայացված է Բաժին IV-ում:





2026թ.-ի 3-րդ եռամսյակում պաշտոնական հրապարակված իրավական ակտերի համառոտ նկարագրերը ներկայացված են Հավելվածում:

II. ՀՀ ՊԵԿ գործունեությունը բնութագրող ցուցանիշներ

1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք

ՀՀ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ		2026թ. հունվար - սեպտեմբեր	
		Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %[1]	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
1.1	ՀՀ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք, այդ թվում՝	752,261,475.1	114.5%	2,308,176,543.1	114.7%
1.1.1	Հարկային մարմնի կողմից գանձված	608,919,362.8	157.9%	1,922,424,674.7	116.0%
1.1.2	Մաքսային մարմնի կողմից գանձված	143,342,112.3	110.8%	385,751,868.4	108.5%






[1] *Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ (4, 5, 7, 8, 10 բաժիններում հաշվարկման հիմք է հանդիսանում գումարային ցուցանիշը): Այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշը եղել է 0, աճի տեմպ չի հաշվարկվում:*

2. ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումարներ

ՀՀ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ		2026թ. հունվար - սեպտեմբեր	
		Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
2.1	ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումար, այդ թվում՝	114,616,411.8	122.2%	337,107,798.8	115.5%
2.1.1	ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մասով միասնական հաշվին մուտքագրված գումար	78,467,482.0	125.1%	232,589,278.4	117.4%
2.1.2	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի մասով միասնական հաշվին մուտքագրված գումար	1,222,784.0	35.9%	3,150,420.2	30.9%
2.1.3	Եկամտային հարկի փոխհատուցվող գումար այդ թվում՝	33,370,425.8	123.1%	90,816,095.7	116.4%
2.1.3.1	Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով փոխհատուցված գումար	26,862,448.0	108.4%	78,632,339.3	112.1%
2.2	Սոցիալական ծախսերի մասով փոխհատուցված գումար	823,649.0	84.8%	8,404,355.4	220.1%




3. Հարկ վճարողների հաշվառում

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ		2026թ. հունվար - սեպտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
3.1	Նոր գրանցված հարկ վճարողների թիվ, որից՝	15,328	35.9%	49,664	40.6%
3.1.1	ֆիզիկական անձ	11,374	28.5%	38,940	34.0%
3.1.2	այդ թվում՝ ԱՁ	4,269	68.6%	17,147	90.4%
3.1.3	իրավաբանական անձ	3,954	144.4%	10,724	139.3%
3.2	Լուծարված կամ պետական հաշվառումից հանված հարկ վճարողների թիվ, որից՝	1,725	104.4%	5,356	97.3%
3.2.1	ԱՁ	1,598	102.0%	4,963	94.0%
3.2.2	իրավաբանական անձ	127	147.7%	393	177.8%
3.3	Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստացած հարկ վճարողներ	14	140.0%	54	120.0%

4. Արտաքին տնտեսական գործունեության ցուցանիշներ

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ			2026թ. հունվար - սեպտեմբեր		
		Քանակ	Ապրանքա-շրջանառություն (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Ապրանքա-շրջանառություն (հազ. դրամ)	Աճի տեմպ %
4.1	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներ, այդ թվում՝	12,053	1,878,581.2	100.1%	17,337	5,430,174.8	97.9%
4.1.1	արտահանում	1,574	622,571.9	85.5%	2,373	1,908,734.3	88.9%
4.1.2	ներմուծում	11,446	1,256,009.3	109.3%	16,562	3,521,440.5	103.6%




5. Գործարքների փաստաթղթավորման ցուցանիշներ


Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ			2026թ. հունվար - սեպտեմբեր		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար[2] (հազ. դրամ)	Աճի տեմպ %
5.1	ՀԴՄ-ներով հայտարարագրված ցուցանիշներ, այդ թվում՝	302,748,797	1,145,989,763.2	124.9%	802,843,838	2,965,621,078.7	124.2%
5.1.1	առանց տաքսիների ՀԴՄ տվյալների	272,286,061	1,103,134,156.2	125.4%	716,957,760	2,856,093,213.4	124.4%
5.1.2	տաքսիների ՀԴՄ տվյալներ	30,462,736	42,855,606.9	111.7%	85,886,078	109,527,865.4	119.4%
5.2	Հաշվարկային փաստաթղթերով հայտարարագրված ցուցանիշներ	15,918,571	3,889,043,562.8	118.1%	44,430,762	10,356,110,320.0	117.7%

6. Եկամուտ ապահոված աշխատատեղերի վերաբերյալ ցուցանիշներ

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ			2026թ. հունվար - սեպտեմբեր		
		Քանակ	Գումար	Աճի տեմպ %	Քանակ	Գումար	Աճի տեմպ %
6.1	Հարկման բազա ունեցող աշխատատեղերի միջին քանակ	834,931	×	105.0%	818,501	×	104.0%
6.2	Միջին հարկման բազա (եկամուտ) (մլն.դրամ)	×	278,740	111.0%	×	270,354	109.0%
6.3	1 աշխատատեղին բաժին ընկնող միջին հարկման բազա (եկամուտ) (դրամ)	×	333,890	106.0%	×	330,138	105.0%

Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ ըստ ամիսների		
		VII	VIII	IX
6.1.1	Հարկման բազա ունեցող աշխատատեղերի քանակ	828,939	830,417	845,438
6.2.1	Հարկման բազա (եկամուտ) (մլն.դրամ)	283,121	276,170	276,928
6.3.1	1 աշխատատեղին բաժին ընկնող միջին հարկման բազա (եկամուտ) (դրամ)	341,547	332,567	327,556





7. Հարկային հսկողության դրվագներ[2]


Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ			2026թ. հունվար - սեպտեմբեր		
		Քանակ	Գումար[3] (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
7.1	Համալիր հարկային ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	150	8,269,784.0	131.5%	376	42,110,754.6	165.5%
7.1.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով	127	4,139,750.1	65.1%	308	21,788,548.3	111.5%
7.2	Լուծարային ստուգում	57	432,334.6	1210.4%	197	610,956.3	644.4%
7.2.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով	16	431,547.6	1208.2%	52	626,443.7	664.2%
7.3	Թեմատիկ հարկային ստուգում (ԹՍ)	1,717	603,820.3	56.8%	5,214	1,766,079.2	59.3%
	այդ թվում՝ թեմատիկ հարկային ստուգման հարցեր	×	×	×	×	×	×
7.3.1	Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտություն (ՀԴՄ)	1,365	325,422.7	47.5%	4,485	1,153,731.6	54.6%

[2] Տեղեկանքում ընդգրկված են հաշվետու եռամսյակում կազմված բոլոր ակտերն ու արձանագրություններն՝ անկախ դրանց ուժի մեջ մտած լինելու կամ վիճարկման գործընթացում գտնվելու հանգամանքից:

[3] Համալիր հարկային ստուգումների և թեմատիկ ուսումնասիրությունների գծով գումարում ներառված են նաև այդ հսկողական միջոցառումների ընթացքում ներկայացված ճշտված հարկային հաշվարկներով առաջացած հարկային պարտավորությունները:

7.3.2	Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտություն (ՉԱ)	316	197,750.0	114.0%	843	473,500.0	94.6%
7.3.3	«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունման, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորության ապահովման կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումների պահպանման ճշտություն (ԱնկանխիկԳ)	139	29,600.0	56.0%	415	78,700.0	58.2%
7.3.4	Պետական տուրքի հաշվարկման և գանձման ճշտություն (ՊՏ)	1	-	-	1	-	-
7.3.5	Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կամ նույնականացման միջոցների կիրառման ճշտություն (ԱԿ/Դ)	274	51,047.6	34.2%	467	59,747.6	26.9%
7.3.6	Հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկություններ փակցնելը (ՏՓ)	1	-	-	7	400.0	12.9%
7.4	Միասնական հաշվին մուտքագրման գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն (Միաս. Ուս.)	1,540	19,527.3	295.5%	5,483	288,404.8	334.7%
7.5	Չափագրման ուսումնասիրություն (ՉՓՄ)	110	3,254,355.5	70.9%	396	8,781,082.6	77.9%
7.6	Թեմատիկ ուսումնասիրություն (ԹՈՒ)	201	18,245,544.8	279.0%	627	39,718,599.0	215.4%
7.6.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով	31	247,114.3	58.1%	127	1,163,993.0	148.0%

Համալիր հարկային և թեմատիկ ստուգումներ և ուսումնասիրություններ




8. Մաքսային հսկողության դրվագներ

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ			2026թ. հունվար - սեպտեմբեր		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
8.1	Մաքսային մարմինների կողմից իրականացված ստուգումներ	36	401,435.0	299.3%	118	1,037,970.0	136.0%
8.2	Բացահայտված մաքսանենգության դեպքեր	112	×	110.9%	317	×	110.5%
8.3	Բացահայտված մաքսային կանոնների խախտման դեպքեր	779	×	104.1%	2,329	×	99.0%

9. Բողոքարկումներ և ստացված հարցադիմումներ

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ		2026թ. հունվար – սեպտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
9.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ, որից՝	393	66.4%	1238	66.6%
9.1.1	բավարարվել է	76	48.4%	267	54.6%
9.1.2	բավարարվել է մասնակի	33	94.3%	95	72.0%
9.1.3	մերժվել է	211	66.1%	696	70.2%
9.1.4	կասեցվել է	-	-	-	-
9.1.5	կարճվել է	71	88.8%	177	71.7%
9.1.6	վերստուգում	2	-	3	-
9.2	ՀՀ ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի կողմից ստացված հարցադիմումներ, որից՝	52,680	123.5%	160,140	96.3%
9.2.1	կատարվել է	52,138	122.9%	153,165	92.5%

10. Հարկային և մաքսային վարչարարության դրվագներ							
Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ			2026թ. հունվար - սեպտեմբեր		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
10.1	Հարկային մարմնի և մաքսային մարմնի մասով կայացված գանձման որոշումներ, ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, սնանկության դիմումներ	×	×	×	×	×	×
10.1.1	Գանձման որոշումներ	1,048	8,415,683.5	31.1%	46,933	72,600,202.1	70.5%
10.1.2	ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք բավարարվել են	101	2,873,111.5	73.0%	310	8,506,342.6	80.9%
10.1.3	ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք մերժվել են	4	3,356.5	2.3%	12	126,671.6	8.5%
10.1.4	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, այդ թվում՝ նոր հայցադիմումներ, որոնք բավարարվել են	271	1,326,196.3	64.0%	903	5,089,433.7	47.7%
10.1.5	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, այդ թվում՝ նոր հայցադիմումներ, որոնք մերժվել են	112	52,484,589.3	11,766.9%	473	54,020,565.2	91.5%
10.2	ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածով (ՀՀ հարկային օրենսգրքի 402.1-ին, 402.2-րդ, 407-410-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներ) սահմանված վարչական վարույթներ	×	×	×	×	×	×
10.2.1	Հարուցված վարույթներ	297	405,662.6	274.2%	854	937,061.5	70.6%
10.2.2	Կազմված վարչական ակտեր	307	458,280.1	32.3%	902	1,125,393.9	84.8%
10.3	Հարկային մարմնի և մաքսային մարմնի մասով վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ	8,466	527,407.1	99.1%	33,726	2,336,185.8	197.7%



11. Ծառայողական քննություններ

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ		2026թ. հունվար - սեպտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
11.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկված ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որից՝	19	41.3%	51	71.8%
11.1.1	կարգապահական պատասխանատվության ենթարկված ծառայողների թիվ	16	51.6%	54	91.5%


12. Ուսումնական ծրագրեր

Հ/Հ	Ցուցանիշ	2026թ. 3-րդ եռամսյակ		2026թ. հունվար - սեպտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
12.1	Հարկ վճարողների համար կազմակերպված դասընթացներ	34	212.5%	122	193.7%
12.1.1	մասնակիցներ	504	164.7%	1,738	138.2%
12.1.2	դասաժամեր	823	734.8%	1,675	278.7%

III. Հարկային եկամուտների ԵՎ տնտեսական զարգացումների համադրություն

1. Տնտեսական ակտիվություն


- 2026թ. առաջին կիսամյակի ՀՆԱ-ն կազմել է 5,166.7 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 481.5 մլրդ դրամով կամ 10.3 տոկոսով: ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 6.0 տոկոս, ՀՆԱ-ի դեֆլատորը՝ 4.1 տոկոս:
- 2026թ. երկրորդ եռամսյակում ՀՆԱ-ն կազմել է 2,834.9 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 282.8 մլրդ դրամով կամ 11.1 տոկոսով: ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 6.7 տոկոս, ՀՆԱ-ի դեֆլատորը՝ 4.2 տոկոս:
- 2026թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՏԱՑ-ը կազմել է 106.9 տոկոս, իսկ հունվար-սեպտեմբեր աճողական ՍԳԻ-ն՝ 104.5 տոկոս: Ընդ որում, հատկանշական է, որ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ 2026թ. հունվարին ՍԳԻ-ն կազմել է 103.8 տոկոս, սեպտեմբերին հասնելով 104.3 տոկոսի:



2. Հարկերի համադրություն տնտեսական ակտիվության հետ

- 2026թ. հունվար-սեպտեմբեր ամիսների հարկային եկամուտների կատարողականը ծրագրային առաջադրանքի նկատմամբ կազմել է 105.8 տոկոս, այսինքն՝ գերակատարվել է 126.9 մլրդ դրամով կամ 5.8 տոկոսով, իսկ ճշտված ծրագրային առաջադրանքի նկատմամբ՝ 104.0 տոկոս, այսինքն՝ գերակատարվել է 89.4 մլրդ դրամով կամ 4.0 տոկոսով:
- 2026թ. հունվար- սեպտեմբեր ամիսներին հարկային եկամուտները նախորդ տարվա նկատմամբ աճել են 295.4 մլրդ դրամով կամ 14.7 տոկոսով ինչը ըստ էության փաստում է, որ հարկերի հավաքագրման մասով արձանագրված ցուցանիշները ևս համադրելի են տնտեսության աճի միտումներին: Ըստ ոլորտների, նշված ցուցանիշի վրա դրական է ազդել մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճը շուրջ 76.8 մլրդ դրամով, որից միայն ԱԱՀ հաշվին՝ 42.1 մլրդ դրամով, իսկ միայն եկամտային հարկի հաշվին՝ 18.6 մլրդ դրամով: Հաջորդը շինարարության ոլորտից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճն է շուրջ 32.1 մլրդ դրամով, որից միայն ԱԱՀ հաշվին՝ 19.0 մլրդ դրամով, իսկ շահութահարկի հաշվին՝ 7.4 մլրդ դրամով: Հանքարդյունաբերության ոլորտի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճը կազմել է շուրջ 29.6 մլրդ դրամով, որից միայն ոոյալթիի հաշվին՝ 23.4 մլրդ դրամով:

2026թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով ՀՀ-ում հավաքագրվել է 89.6 մլրդ դրամ մաքսատուրք, որից ԵՏՄ փոխանցվել-բաշխվել է շուրջ 87.3 մլրդ դրամ: Փաստացի ԵՏՄ ընդհանուր կաթսայից ՀՀ-ին է բաշխվել ընդամենը 53.0 մլրդ դրամ կամ ՀՀ-ի փոխանցած գումարից 34.3 մլրդ դրամով կամ 39.3 տոկոսով պակաս: Ընդհանուր մաքսատուրքի գծով պետական բյուջեի մուտքը կազմել է 55.3 մլրդ դրամ, ինչը 0.3 մլրդ դրամով կամ 0.6 տոկոսով ավել է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:



IV. ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցություն

«Էքսպերտիզ Ֆրանս»-ի կողմից իրականացվող և **Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD)** ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակում 2026թ. հուլիսին ՀՀ ՊԵԿ-ում իրականացվել է **մաքսային արժեքի որոշման համակարգի կատարելագործմանն ուղղված փորձագիտական առաքելություն**: Քննարկվել են միջազգային լավագույն փորձի ներդրման, մաքսային արժեքի վերահսկողության և գործընթացների թափանցիկության բարելավման ուղղությունները:

Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակում 2026թ. օգոստոսին ՀՀ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը հյուրընկալել է **«Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության շրջանակում իրականացվող խորհրդատվական և վերլուծական ծառայությունների տեխնիկական առաքելության ներկայացուցիչներին**: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել առանձին թիրախային հանդիպումներից հետո հստակեցնել Համաշխարհային բանկի կողմից տրամադրվելիք աջակցության շրջանակը՝ ներառյալ թվային փոխկապակցվածության ոլորտը:

2026թ. սեպտեմբերին տեղի է ունեցել ՀՀ ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակության այցը **Իրանի Իսլամական Հանրապետություն**, որի ընթացքում ՊԵԿ նախագահը հանդիպում է ունեցել ԻԻՀ տնտեսական հարցերի և ֆինանսների փոխնախարար, մաքսային ծառայության ղեկավար Ֆորուդ Ասգարիի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև միջսահմանային առևտրային հոսքերի և հսկողական գործառնությունների դյուրացմանն ուղղված երկկողմ հետաքրքրության մի շարք հարցեր: Ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքներով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման կազմակերպման («Պարզեցված մաքսային միջանցք») մասին արձանագրությունը:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում ՀՀ ՊԵԿ-ը սեպտեմբերի 7–18-ը հյուրընկալել է **չգրանցված աշխատողների հայտնաբերմանն ուղղված հարկային վարչարարության կատարելագործման և միջազգային հարկման ոլորտում FITAS գործիքի կիրառմամբ ՊԵԿ կարողությունների գնահատման առաքելությունների ներկայացուցիչներին**: Ուսումնասիրվել են ռիսկերի բացահայտման ու գնահատման մոտեցումները, կիրառվող վերլուծական գործիքներն ու հսկողական ընթացակարգերը, անդրադարձ է կատարվել նաև միջոցառումների արդյունքների գնահատմանն ու ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Քննարկվել են ՊԵԿ կարողությունների զարգացմանն ուղղված հետագա տեխնիկական աջակցության ուղղությունները:

ՀՀ ՊԵԿ նախագահը հանդիպել է նաև ԱՄՀ հայաստանյան առաքելության ղեկավար Ալեքսանդր Ֆերենց Թիմանի գլխավորած պատվիրակությանը՝ քննարկելու հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումները, այդ թվում՝ «EXIM» տեղեկատվական համակարգի և մաքսային միասնական հաշվի ներդրման ընթացքը, թվայնացման ծրագրերն ու սահմանային անցումների տևողության կրճատմանն ուղղված

նոր հարթակի ներդրման աշխատանքները, ինչպես նաև հարկային եկամուտների կատարողականը և կամավոր կարգապահության խթանման միջոցառումները:

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (ՀՄՆԿ/IOTA) հետ համագործակցության շրջանակում ՀՀ ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը 2026թ. սեպտեմբերի 23–24-ը մասնակցել է **ՀՄՆԿ Գործադիր խորհրդի նիստին**: Մասնակցությունը նպաստել է եվրոպական գործընկերների հետ համագործակցության ամրապնդմանը և ՊԵԿ օրակարգային առաջնահերթությունների առաջխաղացմանը՝ հաշվի առնելով նաև Հայաստանի կողմից 2027–2028թթ. ՀՄՆԿ նախագահության ստանձնումը: Խորհրդի առկա ձևաչափով հաջորդ նիստը կայանալու է 2027թ. փետրվարին Հայաստանում:

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակում ՀՀ ՊԵԿ պատվիրակությունը 2026թ. սեպտեմբերին Տաշքենդում մասնակցել է **ԱՊՀ մասնակից պետությունների հարկային (ֆինանսական) հետաքննությունների մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի 25-րդ նիստին**՝ նվիրված ԱՊՀ կազմավորման 35-ամյակին: Նիստի ընթացքում ներկայացվել են ՊԵԿ օպերատիվ-հետախուզության և հետաքննության վարչությունում ռիսկերի վերլուծության, թվային գործիքների կիրառման և համակարգային հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ իրականացվող փոփոխությունները: Ցուցադրվել է նաև ՊԵԿ պատրաստած՝ Խորհրդի պատմությանն ու գործունեությանը նվիրված հատուկ տեսանյութը: Նիստի ավարտին **Խորհրդի նախագահությունը Հայաստանից փոխանցվել է Ուզբեկստանին**:

Սեպտեմբերի 23-ին և 24-ին ՊԵԿ պատվիրակությունը տեսակոնֆերանսի ձևաչափով մասնակցել է Բելառուսի Հանրապետությունում կազմակերպված **Եվրասիական տնտեսական միության** անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 55-րդ և **Անկախ Պետությունների Համագործակցության** մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների 83-րդ նիստերին:

ՊԵԿ պատվիրակությունը 2026թ. սեպտեմբերին Ուզբեկստանում մասնակցել է **Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ)** 7-րդ համաշխարհային շնագիտական ֆորումին: Համաժողովի ընթացքում ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական կենտրոնի և Ուզբեկստանի մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանման միջև ստորագրվել է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՈւՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությանն առընթեր մաքսային կոմիտեի միջև շնագիտական ոլորտում փորձի փոխանակման և համագործակցության մասին» հուշագիր:

ՊԵԿ և **ՀՄԿ** շարունակական համագործակցության արդյունքում սեպտեմբերի 7-ից 11-ը Երևանում անցկացվել է «Ռազմավարական առևտրի վերահսկողության իրականացում» (STCE) թեմայով դասընթաց, որին մասնակցել են մաքսային ծառայության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները:

Հավելված՝ Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1. Փաստաթուղթ	««Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	17.06.2026թ. ՀՕ-282-Ն
Հրապարակումը	09.07.2026թ.
Ուժի մեջ է	19.07.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/227636/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերանայվել և ամբողջականացվել է մաքսային ստուգումների իրականացման, դրանց արդյունքների ամփոփման և ստուգվող անձանց ծանուցման կարգավորումը, հստակեցվել են կամերալ և արտագնա մաքսային ստուգումների տեսակները, դրանց իրականացման, երկարաձգման և կասեցման ժամկետներն ու հիմքերը, սահմանվել է մաքսային ստուգման արդյունքներով ստուգման ակտի նախագծի կազմման, դրա վերաբերյալ առարկությունների ներկայացման և վերջնական ստուգման ակտի կազմման նոր ընթացակարգ:

Միաժամանակ սահմանվել են մաքսային ստուգմանն առնչվող փաստաթղթերի ներկայացման և ծանուցման միասնական եղանակներն ու ժամկետները, ինչպես նաև ստուգման ակտում ընդունված որոշումների արտացոլման կարգը: Վերանայել է նաև մաքսային վճարների և հարկերի սահմանված ժամկետում չվճարման համար հաշվարկվող տույժի չափը՝ 0.04 տոկոսից այն բարձրացնելով մինչև 0.075 տոկոս, իսկ մաքսային ստուգման արդյունքով մաքսային վճարների, այլ հարկերի, տուրքերի և վճարների չհաշվարկման կամ պակաս հաշվարկման դեպքերի համար սահմանվել է պատասխանատվության նոր կարգավորում՝ ընդհանուր դեպքում 20 տոկոսի, իսկ պայմանական բաց թողնված ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օգտագործման կամ տնօրինման պայմանների խախտման հետևանքով պարտավորությունների պակաս վճարման դեպքում՝ 50 տոկոսի չափով տուգանքի կիրառմամբ:

Միաժամանակ հստակեցվել են մաքսային ստուգման արդյունքներով առաջադրված պարտավորությունների կատարման ժամկետները, դրանց բողոքարկման և կատարման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև բացառվել է նույն արարքի համար պատասխանատվության կրկնակի կիրառումը օրենքով նախատեսված դեպքերում: Կատարվել են նաև մաքսային կարգավորման ոլորտում գործող առանձին դրույթների համապատասխանեցման, հստակեցման և տեխնիկական բնույթի փոփոխություններ:

2. Փաստաթուղթ	«ՀՀ Ներդրումների մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18.06.2026թ. ՀՕ-285-Ն
Հրապարակումը	10.07.2026թ.
Ուժի մեջ է	11.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/227811/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով հստակեցվել են ներդրման, ներդրողի, ներդրումային ծրագրի, հսկողության կամ նշանակալի ազդեցության, օտարերկրյա ներդրողի և տեղացի ներդրողի հասկացությունները: Սահմանվել են նաև պորտֆելային ներդրումների տեսակները, որոնք օրենքի իմաստով ներդրում չեն համարվում:

Միաժամանակ ամրագրվել են ներդրումների պաշտպանության շրջանակը, տնտեսական գործունեության և ներդրումների ազատության երաշխիքները, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների կիրառման սկզբունքները, ինչպես նաև կապիտալի և գույքի ազատ տեղաշարժի ու փոխարկման իրավունքներն ու դրանց սահմանափակումները:

Օրենքով սահմանվել են ներդրումների ուղղակի և անուղղակի էքսպրոպրիացիայից պաշտպանության պայմանները, էքսպրոպրիացիայի գնահատման չափանիշները և համարժեք փոխհատուցման տրամադրման սկզբունքները: Հստակեցվել են ներդրողների իրավական պաշտպանության միջոցները, օրինական ներդրումների նկատմամբ օրենքով նախատեսված երաշխիքների կիրառման պայմանները, հողի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների իրացման, աշխատողներ վարձելու, ինչպես նաև ներդրողների պարտականությունների և դրանց խախտման համար պատասխանատվության հարցերը: Կարգավորվել են ներդրումային վեճերի դատական և արտադատական լուծման մեխանիզմները, այդ թվում՝ բանակցությունների և հաշտարարության միջոցով վեճերի կարգավորման հնարավորությունը:

Ներդրումների խթանման նպատակով սահմանվել են ներդրումային խթանների տեսակները, դրանց տրամադրման իրավական հիմքերն ու սկզբունքները, ինչպես նաև դրանց ստացման, հաշվետվողականության չափանիշների պահպանման, վերահսկողության, մշտադիտարկման և գնահատման հետ կապված կարգավորումներ: Նախատեսվել է Հայաստանի Հանրապետությունում գործող ներդրումային խթանների հրապարակային ռեեստրի վարում:

Օրենքով սահմանվել են ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման շրջանակը, Կառավարության և լիազոր մարմնի լիազորությունները, ներդրումային միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության մշակման ու հաստատման, պետական աջակցության նպատակով ներկայացված ներդրումային ծրագրերի գնահատման, ներդրումների և ներդրումային խթանների մշտադիտարկման ու գնահատման, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների քաղաքականության ամփոփագրի հաստատման հետ կապված կարգավորումները:

Միաժամանակ ամրագրվել են ներդրումների նկատմամբ կիրառելի իրավական ակտերի թափանցիկության, հանրամատչելիության, որոշակիության և հստակության ապահովման պահանջները:

Սահմանվել են նաև ներդրողների իրավունքների և երաշխիքների պահպանման, օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ և հետո կատարված ներդրումների նկատմամբ դրա կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև նախկին օրենսդրությամբ նախատեսված ավելի բարենպաստ պայմանների պահպանման դեպքերն ու ժամկետները: Տեղացի ներդրողների՝ բաժնեմասնակցությունից տարբերվող այլ ակտիվներով կատարված ներդրումների նկատմամբ օրենքի կիրառման համար նախատեսվել է փուլային կարգ՝ կախված ներդրման արժեքից և օրենքով սահմանված ժամկետներից: Մասնավորապես, օրենքը տվյալ ակտիվների մասով կիրառվում է ուժի մեջ մտնելու օրվանից, եթե ներդրման արժեքը գերազանցում է 500 միլիոն դրամը, 2028 թվականի հունվարի 1-ից՝ եթե ներդրման արժեքը գերազանցում է 200 միլիոն դրամը, իսկ 2030 թվականի հունվարի 1-ից՝ անկախ ներդրման արժեքից՝ օրենքով սահմանված պայմանների հաշվառմամբ:

3. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18.06.2026թ. ՀՕ-287-Ն
Հրապարակումը	10.07.2026թ.
Ուժի մեջ է	11.07.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/227820/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխության և լրացման արդյունքում «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր՝ 79-րդ կետով, որով Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության ուսումնասիրություն իրականացնող մասնագիտական հանձնաժողովի կողմից շահառուների և գնահատման գործունեության սուբյեկտների դիմումների հիման վրա ուսումնասիրության համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով:

4. Փաստաթուղթ	«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-295-Ն
Հրապարակումը	14.07.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/227932/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում՝

- սահմանվել են ակցիզային հարկի նոր դրույքաչափեր և ակցիզային հարկի հաշվարկման նոր գործակիցներ, որոնք կիրառվելու են 2027թ. փետրվարի 1-ից,

- ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում ներառվել է ԱՏԳ ԱԱ 2404 91 000 ծածկագրին դասվող նիկոտին պարունակող արտադրանքը՝ նախատեսված մարդու օրգանիզմ նիկոտին մատակարարելու համար,

- օրենսգրքի 88-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բենզինի և նյութերի (հավելանյութերի) մասով ակցիզային հարկի հաշվարկմանը վերաբերող հանրագումարային մեծությունը սահմանվել է 167400 դրամ՝ գործող 135000 դրամի փոխարեն,

- ուժը կորցրած է ճանաչվել՝

ա. օրենսգրքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը, որը վերաբերում է ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող կոնյակի հնացման աստիճանի վերաբերյալ տարայի վրա մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկի ամենաբարձր դրույքաչափ կիրառելուն,

բ. օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաբերում է արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռք բերված՝ ԱՏԳ ԱԱ 2710 19 710 0 - 2710 19 980 0 ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 0 ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարների փոխհատուցմանը:

Ակցիզային հարկի դրույքաչափերին և ակցիզային հարկի հաշվարկման գործակիցներին վերաբերող փոփոխություններն ուժի մեջ են մտնելու 2027թ. փետրվարի 1-ից, իսկ օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելու դրույթը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ից:

5. Փաստաթուղթ	«ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-309-Ն
Հրապարակումը	16.07.2026թ.
Ուժի մեջ է	01.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228152/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում հստակեցվել են հաշվարկային փաստաթղթերի և բեռնագրերի դուրսգրման ժամկետները: Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է սահմանված գործունեության ոլորտներում, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակով և մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դեպքերում: Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի պարտադիր կիրառության դեպքում այն չկիրառելու համար սահմանվել է 500 հազար դրամի չափով տուգանք:

6. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-310-Ն
Հրապարակումը	16.07.2026թ.
Ուժի մեջ է	26.07.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228153

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում հստակեցվել է հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին ներկայացնելու պարտավորությունը, ինչպես նաև դրանց ներկայացման կարգը և ժամկետը:

Ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտությունը ներառվել է հարկային հսկողության ենթակա հարցերի շրջանակում, և կարգավորվել են այդ ուղղությամբ իրականացվող ստուգումների կազմակերպման ու անցկացման առանձնահատկությունները:

Մասնավորապես, հստակեցվել են ստուգման հանձնարարագրի ներկայացման ժամկետները և ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման շրջանակը, որը ներառում է հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների ամբողջականության և ճշտության, պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի և ֆինանսական հաշիվների ավտոմատ փոխանակման ոլորտը կարգավորող այլ պահանջների կատարումը:

Միաժամանակ հստակեցվել են հաշվետու ֆինանսական հաստատությունների, հաշվետու անձանց և վերահսկող անձանց կողմից սահմանված պահանջների չկատարման համար պատասխանատվության միջոցները: Սահմանվել են տուգանքներ պատշաճ ուսումնասիրության կամ փաստաթղթերի պահպանման պարտավորությունները չկատարելու, տեղեկությունները չներկայացնելու կամ ուշ ներկայացնելու, ինչպես նաև ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքերի համար: Առանձին պատասխանատվություն է նախատեսվել նաև ինքնահայտարարագիր չներկայացնելու կամ դրանում ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքերի համար:

Միաժամանակ սահմանվել են պատասխանատվության միջոցների չկիրառման և տուգանքի կիրառման հարցում ֆինանսական հաստատության ֆինանսական վիճակը հաշվի առնելու հնարավորությունները, այդ թվում՝ խախտումը մինչև պատասխանատվության միջոցի վարույթի ավարտը վերացնելու կամ դրա տեխնիկական բնույթ ունենալու դեպքերում:

Ամբողջությամբ վերաշարադրվել և հստակեցվել են ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակմանը վերաբերող կարգավորումները՝ սահմանելով կիրառվող հիմնական հասկացությունները, հաշվետու ֆինանսական հաստատությունների և հաշվետու հաշիվների շրջանակը, հաշվետու պետությունների և ազատված հաշիվների որոշման կարգավորումները, տեղեկությունների տրամադրման ընթացակարգերը, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման և պարտավորություններից խուսափելու դեպքերին վերաբերող պահանջները:

Միաժամանակ սահմանվել են օրենքի առանձին դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետները:

7. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-323-Ն
Հրապարակումը	17.07.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228214

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխության և լրացման արդյունքում օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչև այդ պատկանող գրավի առարկայի օտարումից բացի, ԱԱՀ-ից ազատվում է նաև օրենքով սահմանված կարգով հետադարձ հիպոտեկի պայմանագրի համաձայն բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչև այդ պատկանող այն անշարժ գույքի օտարումը, որը նույն հետադարձ հիպոտեկի պայմանագրի համաձայն ծանրաբեռնված էր հետադարձ հիպոտեկով: Միաժամանակ, հստակեցվել է նշված դրույթի կիրառության նպատակով գույքի սեփականության պատկանելիության որոշման կարգը: Մասնավորապես, գրավի առարկան, ինչպես նաև հետադարձ հիպոտեկով ծանրաբեռնված անշարժ գույքը մինչև բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձին պատկանող, եթե այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին: 2027 թվականի հունվարի 1-ից եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող (չհարկվող) եկամուտներ են համարվելու հետադարձ հիպոտեկի պայմանագրի շրջանակներում ստացվող պարբերական ամենամսյա վճարումները:

8. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-344-Ն
Հրապարակումը	17.07.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228263

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերանայվել են օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման, գործողության դադարեցման և սպասարկման կարգավորումները:

Մասնավորապես, հավաստագիրը, որպես կանոն, տրամադրվելու է անժամկետ, բացառությամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու համար տրամադրվող հավաստագրի, որը գործում է տրման օրվանից մինչև տրման ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին օրացուցային օրը: Անժամկետ տրամադրված հավաստագիր ունեցող հարկ վճարողների գործունեության արդյունքները հարկային մարմնի կողմից մշտադիտարկվելու են եռամսյակային պարբերականությամբ, որի արդյունքում Կառավարության սահմանած դեպքերում կարող է դադարեցվել հավաստագրի գործողությունը: Հավաստագիր ունեցող հարկ վճարողների ցանկի հետ միասին կհրապարակվի նաև գործողությունը դադարեցված հավաստագիր ունեցող հարկ վճարողների ցանկը, իսկ հավաստագրի գործողության դադարեցման կարգը կհաստատի Կառավարությունը:

Փոփոխություններով նախատեսվել է նաև, որ օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման գործընթացը չի տարածվելու ներդրումային ֆոնդերի վրա: Հավաստագիր ունեցող հարկ վճարողներին կտրամադրվի առաջնահերթ և արտոնյալ սպասարկում՝ նրանց համար անհատական սպասարկման մասնագետ նշանակելու միջոցով: Բացի այդ, նշված հարկ վճարողների նկատմամբ համալիր հարկային ստուգումների ռիսկայնությունը գնահատելիս կկիրառվի լրացուցիչ՝ 0,8 գործակից:

9. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-383-Ն
Հրապարակումը	24.07.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228517

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում շահութահարկ վճարողի կողմից հետ գնված բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը եկամուտ չի համարվում նաև այն դեպքում, երբ դրանք հետ են գնվել «Բանկերի վերակառուցման մասին» օրենքի համաձայն՝ բանկի վերակառուցման գործընթացում:

Միաժամանակ, շահութահարկի վճարումից ազատման արտոնությունը, որը սահմանված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքով սահմանված ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի համար, տարածվել է նաև

«Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված վերակառուցման հիմնադրամի վրա: Բացի այդ, համապատասխան կարգավորումները լրացվել են «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված դեպքերի և վճարների մասով:

10. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-385-Ն
Հրապարակումը	29.07.2026թ.
Ուժի մեջ է	30.07.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228632

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում բանկերի կողմից իրենց թողարկած՝ Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերի, ինչպես նաև բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասի կամ փայաբաժնի մասով շահաբաժինների վճարման և բաշխման հետ կապված սահմանվել են հարկման և հաշվետվողականության համապատասխան կարգավորումներ:

Մասնավորապես, բանկերը, որպես հարկային գործակալ, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարվող շահաբաժիններից պարտավոր են հաշվարկել և պետական բյուջե վճարել շահութահարկ՝ 15% դրույքաչափով, իսկ ֆիզիկական անձանց վճարվող շահաբաժիններից եկամտային հարկը հաշվարկել նույն՝ 15% դրույքաչափով: Ընդ որում, տվյալ բանկի թողարկած բաժնետոմսերից բաժնետիրոջ կողմից ստացվող շահաբաժինները համարվում են Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժիններ նաև այն դեպքում, երբ շահաբաժին ստացող բաժնետիրոջը պատկանող՝ տվյալ բանկի ցուցակված բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը շահաբաժինների բաշխման կամ վճարման օրվա դրությամբ գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքի 1%-ը:

Միաժամանակ, բանկերը պարտավոր են մինչև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ ՀՀ հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով, հարկային մարմին ներկայացնել նախորդ հաշվետու եռամսյակում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա շահաբաժինների, դրանցից հաշվարկված և պահված շահութահարկի, ինչպես նաև պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների վերաբերյալ հաշվարկ: Բացի այդ, նույն ժամկետում պարտավոր են պետական բյուջե վճարել այդ եկամուտներից հաշվարկված և պահված շահութահարկի գումարները:

Օրենքով սահմանվել է նաև, որ բանկի կանոնադրական, բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում մասնակցությունից՝ բաժնետոմսից, բաժնեմասից կամ փայաբաժնից, շահաբաժինների տեսքով ստացված եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում նույն բանկի կապիտալում ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված

եկամտային հարկի գումարները, պետական բյուջեից ենթակա չէ փոխհատուցման: Բացի այդ, բանկի մասնակից կամ բաժնետեր հանդիսացող կազմակերպությունները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

11. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	03.07.2026թ. ՀՕ-386-Ն
Հրապարակումը	29.07.2026թ. 30.07.2026թ.
Ուժի մեջ Հղում	https://www.arlis.am/hy/acts/228641

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում բանկերի կողմից բանկերի թողարկած և Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերի, ինչպես նաև բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասի կամ փայաբաժնի մասով ֆիզիկական անձ մասնակիցներին (բաժնետերերին) շահաբաժին վճարելու և իրավաբանական անձ մասնակիցներին (բաժնետերերին) շահաբաժնի բաշխման մասին որոշում ընդունելու համար սահմանվել է պետական տուրք՝ շահաբաժնի 15 տոկոսի չափով:

Սահմանվել է նաև, որ տվյալ բանկի թողարկած բաժնետոմսերից բաշխվող կամ վճարվող շահաբաժինները համարվում են չցուցակված բաժնետոմսերից բաշխվող կամ վճարվող շահաբաժիններ նաև այն դեպքում, երբ շահաբաժին ստացող բաժնետիրոջը պատկանող՝ տվյալ բանկի ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքը շահաբաժինների բաշխման կամ վճարման օրվա դրությամբ գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքի 1 տոկոսը:

Բանկերը պարտավոր են շահաբաժինների վճարման կամ շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը ներառող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել սահմանված տեղեկատվությունը և նույն ժամկետում վճարել պետական տուրքի գումարը: Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու և ժամանակին վճարելու պատասխանատվությունը դրվում է բանկի վրա: Սահմանված ժամկետում պետական տուրքը չվճարելու դեպքում բանկից բռնագանձվում է չվճարված պետական տուրքի գումարը՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին:

12. Փաստաթուղթ	««Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.08.2026թ. ՀՕ-419-Ն
Հրապարակումը	31.08.2026թ.

Ուժի մեջ է	01.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230396/latest

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում «բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինվել են «բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարարություն» բառերով և համապատասխան հոլովաձևերով: Սահմանվել է նաև, որ օրենքից բխող փոփոխությունները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում կատարվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

13. Փաստաթուղթ	«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.08.2026թ. ՀՕ-440-Ն
Հրապարակումը	31.08.2026թ.
Ուժի մեջ է	01.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230386/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի ամբողջ տեքստում «արտաքին գործերի նախարարություն» բառերը իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինվել են «արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարություն» բառերով:

14. Փաստաթուղթ	«Ֆոնդային բորսաների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23.07.2026թ. N 1079-Ն
Հրապարակումը	23.07.2026թ.
Ուժի մեջ է	24.07.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228467/latest

Համառոտ նկարագիր

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 20.6-րդ հոդվածը, ՀՀ հարկային օրենսգրքի 105-րդ, 125-րդ, 130-րդ, 132-րդ, 134-րդ և 150-րդ հոդվածները՝ որոշմամբ սահմանվել է ֆոնդային բորսաների ցանկը:

15. Փաստաթուղթ	«Պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով ՀՀ-ից բեռնատար տրանսպորտային միջոցների՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու մեկնման դեպքերը, առանձին բեռնատար տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներից բացթողնման առաջնահերթությունները, կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների՝ հերթերի կառավարման համակարգին միանալու կարգը, կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեության իրականացման պահանջները, կուտակային կայանատեղիներում հերթագրման ծառայության վճարի առավելագույն չափը, ինչպես նաև ՀՀ պետական սահմանի այն ավտոմոբիլային անցման կետերը սահմանելու մասին, որտեղից բեռնատար տրանսպորտային միջոցների մեկնումը ՀՀ-ից կարող է իրականացվել միայն կուտակային կայանատեղի մուտք և ելք գործելուց հետո» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23.07.2026թ. N 1090-Ն
Հրապարակումը	24.07.2026թ.
Ուժի մեջ է	03.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228550/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով Հայաստանի Հանրապետությունից բեռնատար տրանսպորտային միջոցների՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու մեկնման դեպքերը, առանձին բեռնատար տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներից բացթողնման առաջնահերթությունները, ինչպես նաև կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների՝ հերթերի կառավարման համակարգին միանալու կարգը և կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեության իրականացման պահանջները:

Մասնավորապես, N 1 հավելվածով սահմանվել են բեռնատար տրանսպորտային միջոցների՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքերը, կուտակային կայանատեղիներից բեռնատար տրանսպորտային միջոցների բացթողնման առաջնահերթությունները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների խմբերի նկատմամբ առաջնահերթությունների կիրառման կարգավորումները:

N 2 հավելվածով սահմանվել են կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների՝ հերթերի կառավարման համակարգին միանալու կարգը, դրա համար ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները, հերթերի կառավարման համակարգին միանալու

և կուտակային կայանատեղիի գործարկման ընթացակարգերը, կուտակային կայանատեղիների տարածքին, կառուցվածքին, տեղակայմանը, մակերեսին, գույքային հագեցվածությանը և էլեկտրոնային համակարգերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև կուտակային կայանատեղիների գործունեության նկատմամբ մաքսային մարմինների կողմից իրականացվող հսկողության, գործունեության կասեցման և դադարեցման դեպքերը:

Միաժամանակ, սահմանվել է Հայաստանի Հանրապետությունից մեկնող բեռնատար տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներում հերթագրման ծառայության վճարի առավելագույն չափը՝ մեկ բեռնատար տրանսպորտային միջոցի համար հինգ հազար դրամի չափով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաև «Բագրատաշեն» և «Ագարակ» պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետեր բեռնատար տրանսպորտային միջոցների մուտքի իրականացման համապատասխան կարգը:

16. Փաստաթուղթ	«ՀՀ տարածք ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2002 90 310 0, 2002 90 390 0, 2002 90 910 0, 2002 90 990 0 ծածկագրերին դասվող ապրանքատեսակների ներմուծման ժամանակավոր արգելք կիրառելու» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30.07.2026թ. N 1098-Ն
Հրապարակումը	30.07.2026թ.
Ուժի մեջ է	03.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231554/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության երկրներից տեղափոխման ժամանակավոր արգելք է սահմանվել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ համապատասխան ծածկագրերին դասվող տոմատի մածուկի նկատմամբ:

Մասնավորապես, նախատեսվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի կողմից սահմանված ժամկետներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ծանուցելը՝ ապրանքների ներմուծման դեպքում ոչ սակագնային կարգավորման միջոցների ժամանակավոր կիրառման մասին, ինչպես նաև համապատասխան առաջարկությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելը:

Միաժամանակ, նախատեսվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից ապահովել որոշման 1-ին կետի կատարման նկատմամբ վերահսկողությունը: Որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 3-ից և գործում է 6 ամիս ժամկետով:

17. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը	30.07.2026թ. N 1116-Ն
Հրապարակումը	30.07.2026թ.
Ուժի մեջ է	31.07.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228672/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված)՝ 2023 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած որոշակի պայմանների առկայության դեպքում ավտոտրանսպորտային միջոցները սեփականատիրոջ դիմում-հայտարարության հիման վրա 2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ խոտանված համարելու և հաշվառման համակարգչային շտեմարանի գործող հատվածից հանելու կարգավորում է նախատեսվել:

Մասնավորապես, նշված կարգավորումը տարածվում է այն տրանսպորտային միջոցների վրա, որոնց համար 2023 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած չի կնքվել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր, դրանցով իրավախախտում չի արձանագրվել, դրանք չեն անցել տեխնիկական զննություն, դրանց համար փոխադրամիջոցների գույքահարկ չի վճարվել և տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման ու պետական հաշվառման (վերահաշվառման) էլեկտրոնային ռեգիստրում որևէ գործողություն չի կատարվել:

Միաժամանակ, սահմանվել է, որ նշված կարգավորումը չի տարածվում այն տրանսպորտային միջոցների վրա, որոնց վերջին սահմանահատումը 2023 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած Հայաստանի Հանրապետությունից ելքի սահմանահատում է: Նախատեսվել է նաև, որ այդ տրանսպորտային միջոցները համապատասխան հանգամանքների ի հայտ գալու դեպքում վերադարձվում են հաշվառման համակարգչային շտեմարանի գործող հատված: Համայնքների ղեկավարների կողմից նման տրանսպորտային միջոցների ի հայտ գալու դեպքում նախատեսվել է 5-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համապատասխան վարչությանը:

Որոշմամբ սահմանվել է նաև համապատասխան դիմում-հայտարարության ձևը:

18. Փաստաթուղթ	«ՀՀ պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	06.08.2026թ. N-1161-Ն
Հրապարակումը	07.08.2026թ.
Ուժի մեջ է	11.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229073/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7214 և 7215 ապրանքային դիրքերում դասակարգվող պողպատե ամրանների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման համար հիմնական լիցենզիայի կիրառման պահանջ է սահմանվել: Սահմանվել է, որ մինչև մեկ տոննա ապրանքների համար լիցենզիայի տրամադրման դեպքում պետական տուրքը վճարվում է «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված դրույքաչափին համապատասխան: Հիմնական լիցենզիայի տրամադրման լիազոր մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, իսկ ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանվել են որոշման N 1 և N 2 հավելվածներով:

Նախատեսվել է նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սահմանված ժամկետներում ծանուցելը ոչ սակագնային կարգավորման միջոցի ժամանակավոր կիրառման մասին և համապատասխան առաջարկը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելը: Սահմանվել են հիմնական լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, լիցենզիայի տրամադրման և թերի փաստաթղթերի լրացման ժամկետները, հայտի մերժման, լիցենզիայի գործողության դադարեցման և կրկնօրինակի տրամադրման դեպքերը:

19. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 31-ի N 406-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	13.08.2026թ. N 1189-Ն
Հրապարակումը	13.08.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229376/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 31.03.2022թ. N406-Ն որոշմամբ սահմանված՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ֆիզիկական անձանց մատուցված էլեկտրոնային ծառայությունների կամ առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից էլեկտրոնային առևտրի շրջանակներում ֆիզիկական անձին մատակարարված ապրանքների մասով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների պետական բյուջե վճարման կարգում: Կատարված փոփոխություններով՝ ՀՀ կառավարության 31.03.2022թ. N406-Ն որոշմամբ սահմանված ԱԱՀ-ի գումարների վճարման կարգը՝

- կիրառվելու է այն բոլոր դեպքերում, երբ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունները կրում են ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն,

- շարունակելու է կիրառվել ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից շահագործվող ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ տարածքում ֆիզիկական անձանց մատակարարված ապրանքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների պետական բյուջե վճարման նկատմամբ:

20. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 184-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	13.08.2026թ. N 1192-Ն
Հրապարակումը	13.08.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229409/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 17.02.2022թ. N184-Ն որոշմամբ սահմանված՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ֆիզիկական անձին էլեկտրոնային ծառայության մատուցման դեպքում ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ էլեկտրոնային առևտրի շրջանակներում ֆիզիկական անձին ապրանքներ մատակարարելու դեպքում առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկային մարմնում հաշվառվելու մասով: Կատարված փոփոխություններով ՀՀ կառավարության 17.02.2022թ. N184-Ն որոշմամբ սահմանված՝ հարկային մարմնում հաշվառման պարզեցված ընթացակարգը (e-VAT-ի համակարգով)՝

- կիրառվելու է այն բոլոր դեպքերում, երբ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունները ՀՀ-ում իրականացվող գործարքների մասով կրում են ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն,
- շարունակելու է կիրառվել ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) մասով, որոնց կողմից շահագործվող ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակներով ապրանքները ՀՀ տարածքում մատակարարվում են ֆիզիկական անձանց:

21. Փաստաթուղթ	«ՀՀ տարածք առանց ներմուծման մաքսատուրքի վճարման արդյունաբերական վերամշակման համար նախատեսված կակաո-փոշու ներմուծման մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	13.08.2026թ. N 1198-Ն
Հրապարակումը	13.08.2026թ.
Ուժի մեջ է	14.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229415/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1805 00 000 0 ծածկագրին դասվող և Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական վերամշակման համար նախատեսված կակաո-փոշու նկատմամբ սահմանվել է սակագնային արտոնություն՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառմամբ: Արտոնությունը կիրառվում է մինչև 300,0 տոննա ընդհանուր ծավալով ներմուծվող կակաո-փոշու նկատմամբ:

Սակագնային արտոնությունը կիրառվում է «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ, որոնց մաքսային հայտարարագիրը, իսկ մինչև ապրանքների հայտարարագրումը բացթողման դեպքում՝ մինչև ապրանքների հայտարարագրումը բացթողման համար դիմումը, Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից գրանցվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2026 թվականի մայիսի 20-ի N 60 որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

22. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1971-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20.08.2026թ. N 1234-Ն
Հրապարակումը	20.08.2026թ.
Ուժի մեջ է	21.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229845

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ 2026 թվականի ընթացքում սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1971-Ն որոշման մեջ, որով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ 2026 թվականի ընթացքում 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառմամբ սակագնային արտոնության շրջանակներում թույլատրվող տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակը 15 000 հատից ավելացվել է մինչև 20 000 հատ, որից՝ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված քանակը՝ 12 000 հատից մինչև 16 500 հատ, իսկ 2-րդ ենթակետով սահմանված քանակը՝ 3 000 հատից մինչև 3 500 հատ:

23. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.03.2026թ. N 1313-Ն
Հրապարակումը	03.09.2026թ.
Ուժի մեջ է	04.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230618/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն և լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման կարգը, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները, էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում կիրառության կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1976-Ն որոշման մեջ, որով սահմանվել է հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա տպագրման ենթակա տեղեկատվությունը (տվյալները)՝ համաձայն նոր N 10 հավելվածի: N 10 հավելվածով սահմանվել է, որ ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրվեն, մասնավորապես, կտրոնի հերթական համարը, ՀԴՄ կիրառողի անվանումը, ՀԴՄ-ի կիրառության վայրի հասցեն, ՀՎՀՀ-ն, ՀԴՄ-ի գրանցման համարը, կտրոնի տպագրման ամսաթիվն ու ժամը, սպասարկող բաժնի համարը, ապրանքի անվանումը և ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, ապրանքի քանակը և չափման միավորը, կիրառված զեղչի չափը, վճարման ենթակա գումարները, ընդհանուր գումարը և ԱԱՀ-ի գումարը, պատասխանատու անձի (գանձապահի) համարը, ֆիսկալավորման ռեժիմի նշանը, «կանխավճար» գրառումը, ֆիսկալ համարը, ինչպես նաև նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում՝ նույնականացման միջոցների քանակը և դրանց հիման վրա գեներացվող ստուգիչ համարը, իսկ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը: Միաժամանակ, համապատասխան փոփոխություններ են կատարվել որոշման N 3 հավելվածում՝ դրանում պարունակվող հղումները և պահանջները նոր N 10 հավելվածով սահմանված կարգավորումներին համապատասխանեցնելու նպատակով:

24. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1699-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.09.2026թ. N 1315-Ն
Հրապարակումը	03.09.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230615/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի «Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում դրանց գների մեջ ներառված և Հայաստանի Հանրապետության տարածքում վճարված ավելացված արժեքի հարկի գումարներն օտարերկրյա քաղաքացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց փոխհատուցելու դեպքերը և կարգը, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի վերադարձի հարկային հաշվում պարտադիր ներառվող տվյալների շրջանակը սահմանելու մասին» N 751-Ն որոշման հավելվածում՝ ԱԱՀ-ի գումարների վերադարձի գործընթացում լիազորված օպերատորի ներգրավման և դրա գործունեության կարգավորման նպատակով:

Մասնավորապես, նախատեսվել է, որ ԱԱՀ-ի գումարների փոխհատուցումը օտարերկրյա անձին, վերջինիս նախաձեռնությամբ, կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված օպերատորի միջոցով: Լիազորված օպերատոր կարող է հանդիսանալ հեղինակավոր օտարերկրյա կազմակերպությունը կամ դրա մասնաճյուղը, եթե տվյալ կազմակերպությունն առնվազն 10 այլ պետություններում ունի ԱԱՀ-ի գումարների վերադարձի թվային համակարգերի ներդրման և գործարկման փորձ:

Սահմանվել է լիազորված օպերատորի ընտրության, լիազոր մարմնի և օպերատորի միջև պայմանագրի կնքման, օպերատորի գործունեության, հաշվետվությունների ներկայացման, տեղեկատվության փոխանակման և լիազորությունների դադարեցման կարգը: Լիազորված օպերատորի և լիազոր մարմնի միջև կնքված պայմանագրի գործողության ընթացքում ԱԱՀ-ի գումարների վերադարձն իրականացվում է բացառապես օպերատորի միջոցով:

Լիազորված օպերատորի միջոցով ԱԱՀ-ի վերադարձի դեպքում սահմանվել է, որ մեկ օրացուցային օրվա ընթացքում տվյալ հարկ վճարողից ձեռք բերված ապրանքների արժեքը պետք է կազմի առնվազն 10.000 դրամ, իսկ փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարը չպետք է պակաս լինի 1667 դրամից:

Սահմանվել է, որ լիազորված օպերատորը իր միջոցների հաշվին ապահովում է ԱԱՀ-ի գումարների վերադարձի ամբողջական թվային համակարգի ստեղծումը, ներդրումը և անխափան գործարկումը, ինչպես նաև տեղեկատվության փոխանակումը հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի հետ: Օպերատորին իրավունք է վերապահվել ԱԱՀ-ի վերադարձ իրականացնելիս գանձելու միջնորդավճար՝ վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարի առավելագույնը 25 տոկոսի չափով:

Կարգավորվել են նաև լիազորված օպերատորի կողմից ԱԱՀ-ի վերադարձված գումարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն տեղեկատվության ներկայացման, տվյալների համադրման և օպերատորի բանկային հաշվին համապատասխան գումարների փոխանցման հետ կապված հարցերը:

Փոփոխություններ են կատարվել նաև ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվի, անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման, մաքսային մարմնի կողմից ապրանքի առկայության ստուգման և ԱԱՀ-ի վերադարձի գործընթացում լիազորված օպերատորի մասնակցության հետ կապված դրույթներում: Միաժամանակ, հանվել են դրամարկղի մուտքի օրդերին վերաբերող դրույթները և ուժը կորցրած է ճանաչվել հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետը:

Սահմանվել է, որ լիազորված օպերատորի ընտրված լինելու դեպքում «Ենթակա է փոխհատուցման» գրառումը ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվի կամ ՀԴՄ-ի հարկային հաշվի վրա կատարում է լիազորված օպերատորը, իսկ համապատասխան փաստաթղթերը և դրանցում առկա տվյալներն արտացոլվում են օպերատորի թվային համակարգում:

Փոփոխվել է նաև ԱԱՀ-ի գումարների փոխանցման կարգը՝ նախատեսելով մաքսային մարմնի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված տեղեկությունների հիման վրա տվյալների համադրում և հաստատված գումարների փոխանցում վճարային քարտի համարին: Բանկի կողմից մերժված և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն վերադարձված գումարները կրկին չեն փոխանցվում և մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես այլ եկամուտ:

Նախատեսվել է, որ լիազորված օպերատորի կողմից ԱԱՀ-ի վերադարձը կարող է իրականացվել կանխիկ կամ անկանխիկ եղանակով, իսկ կանխիկ վերադարձը՝ նաև սահմանային անցման կետերում գործող առևտրային բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղերի կամ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի միջոցով:

25. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 27-ի N 883-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.09.2026թ. N 1316-Ն
Հրապարակումը	03.09.2026թ.
Ուժի մեջ է	ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 4-ի ՀՕ-84-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230613/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 27-ի N 883-Ն որոշման վերնագրում և 1-ին կետում կատարվել են լրացումներ՝ մաքսատուրքի և հարկերի վերաբերյալ կարգավորումներում էլեկտրոնային առևտրի ապրանքների համար վճարվող մաքսատուրքը և հարկերը ներառելու նպատակով: Մասնավորապես, որոշման վերնագրում «միագումար մաքսային վճարի ձևով վճարվող մաքսատուրքի և հարկերի» բառերից հետո լրացվել է «,էլեկտրոնային առևտրի ապրանքների համար վճարվող մաքսատուրքի և հարկերի» բառերը, իսկ որոշման 1-ին կետում «միագումար մաքսային վճարի ձևով վճարվող մաքսատուրքի և հարկերի» բառերից հետո լրացվել է «,էլեկտրոնային առևտրի ապրանքների համար վճարվող մաքսատուրքի և հարկերի» բառերը:

26. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 402-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11.09.2026թ. N 1332-Ն
Հրապարակումը	11.09.2026թ.
Ուժի մեջ է	12.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230926/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 06.05.2026թ. ՀՕ-234-Ն օրենքով օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետում կատարված փոփոխությամբ՝ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառվում է նաև համայնքներին նվիրատվությամբ ապրանքների մատակարարման գործարքների մասով: Այդ փոփոխությամբ պայմանավորված նշված որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N402-Ն որոշումը:

27. Փաստաթուղթ	«Շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի և բուքմեյքերային գործունեության կազմակերպիչների կողմից վերահսկող մարմին իրենց գործունեության վերաբերյալ ամսական հաշվետվություններ ներկայացնելու կարգը, ժամկետները, բովանդակությունը և ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11.09.2026թ. N 1343-Ն
Հրապարակումը	11.09.2026թ.
Ուժի մեջ է	ուժի մեջ է մտնում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքն ամբողջությամբ գործողության մեջ դրվելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230939/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի և բուքմեյքերային գործունեության կազմակերպիչների կողմից վերահսկող մարմին իրենց գործունեության վերաբերյալ ամսական հաշվետվություններ ներկայացնելու կարգերը, ինչպես նաև հաստատվում են համապատասխան հաշվետվությունների օրինակելի ձևաթղթերը՝ համաձայն N 1-Ն 6 հավելվածների:

Սահմանվել է, որ հաշվետու ժամանակահատված է համարվում յուրաքանչյուր ամիս, իսկ հաշվետվությունները վերահսկող մարմին են ներկայացվում մինչև հաշվետու յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

28. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 410-ն և 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1954-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	17.09.2026թ. N 1364-Ն
Հրապարակումը	18.09.2026թ.
Ուժի մեջ է	19.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231064/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացում են կատարվել ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 410-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1954-Ն որոշումներում:

Մասնավորապես, սահմանվել է, որ 2027 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումն իրականացվում են թվային համակարգի միջոցով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի: Մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը դրանք կարող են իրականացվել նաև թվային համակարգի միջոցով: Միաժամանակ, եթե մինչև 2027 թվականի հուլիսի 1-ն աշխատանքային հարաբերությունների ծագումն իրականացվել է թվային համակարգի միջոցով, ապա փոփոխումը և դադարումը ևս իրականացվում է թվային համակարգի միջոցով: N 410-Ն որոշման հավելվածի 5.1-ին կետը ուժը կորցրած է ճանաչվել:

Փոփոխվել են նաև թվային համակարգ մուտք գործելու և էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման կարգավորումները. մասնավորապես, համապատասխան դրույթներից հանվել են կացության կարգավիճակ չունեցող օտարերկրացիների՝ ՀՎՀՀ-ով և ՊԵԿ-ի կողմից տրամադրվող մուտքանուն-գաղտնաբառով համակարգ մուտք գործելու, ինչպես նաև օտարերկրացիների համար այլ էլեկտրոնային թվային ստորագրության լուծումների վերաբերյալ դրույթները: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության վերաբերյալ ձևակերպումը փոխարինվել է «Թվային համակարգում կիրառվում է անձը հաստատող փաստաթղթում» ձևակերպմամբ: Հանվել են նաև աշխատողի և մինչև տասնվեց տարեկան անձի դեպքում ծնողի, խնամատար ծնողի, որդեգրողի կամ խնամակալի հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարի վերաբերյալ դրույթները:

Միաժամանակ, մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը կնքված և շարունակվող աշխատանքային պայմանագրերը, ինչպես նաև մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն ընդունված և գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը թվային համակարգ են մուտքագրվում 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2028 թվականի հունիսի 30-ը՝ մուտքագրման պահին գործող պայմաններով, եթե դրանք չեն կնքվել կամ ընդունվել թվային համակարգի միջոցով: Դրան համապատասխան՝ N 1954-Ն որոշման համապատասխան դրույթներում 2026 թվականի հունվարի և 2026 թվականի դեկտեմբերի 31-ի փոխարեն սահմանվել են 2027 թվականի հուլիսի և 2028 թվականի հունիսի 30-ի համապատասխան ժամկետները:

Վերաձևակերպվել է նաև N 1954-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը կնքված աշխատանքային պայմանագրերի կամ ընդունված անհատական իրավական ակտերի՝ 2027 թվականի հուլիսի 1-ից մինչև 2028 թվականի հունիսի 30-ը թվային համակարգ չմուտքագրվելու դեպքում դրանց փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ կապված կարգավորումների մասով: N 1954-Ն որոշման հավելվածը լրացվել է նոր՝ 17.1-ին կետով, համաձայն որի՝ կարգով սահմանված աշխատանքային պայմանագրերը թվային համակարգ մուտքագրելու կարգավորումները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95.1-ին հոդվածով սահմանված դեպքերի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե աշխատանքային պայմանագիրը երբ է կնքվել:

29. Փաստաթուղթ	«Մաքսային պարտավորությունների վերաբերյալ մաքսային մարմնի կողմից մաքսային պարտավորություններ վճարողին ուղարկվող ծանուցագրի ձևը և այդպիսի ծանուցագրում պարունակվող տեղեկությունները սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	24.07.2026թ. N 802-Ն
Հրապարակումը	30.07.2026թ.
Ուժի մեջ է	Հրամանն ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228664/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել են մաքսային պարտավորությունների վերաբերյալ մաքսային մարմնի կողմից մաքսային պարտավորություններ վճարողին ուղարկվող ծանուցագրի ձևը և դրանում պարունակվող տեղեկությունները, որում ներառվում են՝ ծանուցագրի համարը և ամսաթիվը, մաքսային մարմնի անվանումը, մաքսային պարտավորություններ վճարողի վերաբերյալ տվյալները, մաքսային պարտավորության տեսակը և գումարը, վճարման վերջնաժամկետը, պարտավորության առաջացման հիմք հանդիսացած մաքսային փաստաթղթի գրանցման համարը, ինչպես նաև պարտավորությունը չկատարելու համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ տեղեկությունները:

Ծանուցագիրը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ անհաղթահարելի ուժի հետևանքով համակարգի խափանման դեպքում՝ թղթային եղանակով: Խափանման հանգամանքների վերացումից հետո թղթային եղանակով ներկայացված ծանուցագրերը 5 աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ:

30. Փաստաթուղթ	«Մաքսային մուտքի անդորրագրի կիրառման կարգը և ֆիզիկական անձանց կողմից ժամանակավոր ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային գործառնությունների կատարման կարգը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	24.07.2026 թ. N 803-Ն
Հրապարակումը	29.07.2026թ.
Ուժի մեջ է	08.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228652/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել են ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների համար մաքսային պարտավորությունների հաշվառման և վճարման նպատակով մաքսային մուտքի անդորրագրի կիրառման, ինչպես նաև ժամանակավոր ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային գործառնությունների կատարման կարգերը:

Մաքսային մուտքի անդորրագիրը լրացվում է էլեկտրոնային եղանակով՝ մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ համակարգի խափանման դեպքում կարող է լրացվել թղթային եղանակով՝ տվյալները հետագայում էլեկտրոնային համակարգում լրացնելու պայմանով: Անդորրագիրը կիրառվում է անձնական օգտագործման ապրանքների համար մաքսատուրքի, հարկերի և պետական տուրքի հաշվառման և վճարման նպատակով:

Ժամանակավոր ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հաշվառման համար որպես ուղևորային մաքսային հայտարարագիր կարող է ներկայացվել սահմանված ձևով դիմում, որի հիման վրա մաքսային մարմինը էլեկտրոնային համակարգով ձևավորում է մաքսային մուտքի անդորրագիր: Անդորրագրում նշվում է տրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծման ժամկետը և անհրաժեշտ այլ տեղեկությունները, իսկ տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանման ժամանակ անդորրագիրը ներկայացվում է մաքսային մարմնին՝ համապատասխան նշումներ կատարելու համար:

31. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի N 1318-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը	24.07.2026թ. N 804-Ն
Հրապարակումը	03.08.2026թ.
Ուժի մեջ է	ուժի մեջ է մտնում ««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/228834/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել կանխավճարների գումարները որպես մաքսային պարտավորությունների կատարման ապահովում օգտագործելու, ինչպես նաև դրանց վերադարձի կարգավորումներում:

Փոփոխությունների արդյունքում «գանձապետական հաշվին» ձևակերպումը փոխարինվել է «գանձապետական ավանդային հաշվին» ձևակերպմամբ, իսկ կարգավորումներից հանվել են հաշվանցմանը վերաբերող դրույթները: Անդորրագիրը տրամադրվում է հայտարարատուի կամ լիազորված մաքսային ներկայացուցչի դիմումի հիման վրա՝ մաքսային հայտարարագրի գրանցումից հետո մինչև ապրանքների բացթողումը, բացառությամբ սահմանված դեպքերի:

Սահմանվել է, որ անդորրագրի տրամադրումը մերժվում է Կառավարության կողմից սահմանված դեպքերին չհամապատասխանելու և (կամ) սահմանված պայմանները չապահովելու դեպքում: Միաժամանակ, չօգտագործված կանխավճարների վերադարձի համար նախատեսված դիմումների ձևերը սահմանվում են ՀՀ ՊԵԿ-ի կողմից:

Սահմանվել է նաև, որ համապատասխան որոշման կայացման դեպքում դրամական միջոցները անմիջապես էլեկտրոնային համակարգի միջոցով ուղղվում են մաքսային միասնական հաշվին՝ որպես կանխավճարի գումարներ, իսկ մերժման դեպքում որոշումը դիմումատուին ներկայացվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում:

32. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը որպես կանխավճարներ մուտքագրված դրամական միջոցների օգտագործման մասին հաշվետվության մեջ արտացոլվող տվյալները սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	29.07.2026թ. N 815-Ն
Հրապարակումը	11.08.2026թ.
Ուժի մեջ է	Հրամանն ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229157/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել են մաքսային միասնական հաշվին որպես կանխավճարներ մուտքագրված դրամական միջոցների օգտագործման մասին հաշվետվության մեջ արտացոլվող տվյալները:

Հաշվետվությունում ներառվում են հաշվետու ժամանակահատվածը, մաքսային վճարների գծով պարտավորություն կրող անձի տվյալները, ՀԾՀ-ն կամ ՀՎՀՀ-ն, կանխավճարների սկզբնական և վերջնական մնացորդները, դրամական միջոցների մուտքի ամսաթիվը, գումարը, մուտքի հիմքը և փոխանցման աղբյուրը, ինչպես նաև ելքի ամսաթիվը, գումարը և ելքի նպատակը:

Հաշվետվությունը կարող է արտածվել նաև առանձին՝ դրամական միջոցների մուտքի և ելքի վերաբերյալ տվյալներով:

33. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 22-ի N 209-ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	29.07.2026թ. N 816-Ն
Հրապարակումը	11.08.2026թ.
Ուժի մեջ է	ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/229161/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխվել են ավել վճարված կամ բռնագանձված պարտավորությունների գումարների և չօգտագործված կանխավճարների վերադարձի կարգավորումները:

Սահմանվել են՝ չօգտագործված կանխավճարների վերադարձի նպատակով մաքսային մարմիններին դիմումի ներկայացման կարգը և ձևը, դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, վերադարձի որոշման ձևը և կարգը, ինչպես նաև չօգտագործված կանխավճարների վերադարձի մերժման որոշման ձևը:

Միաժամանակ, սահմանվել են ավել վճարված կամ բռնագանձված պարտավորությունների գումարների վերադարձի նպատակով մաքսային մարմիններին դիմումի ներկայացման կարգը և ձևը: Հրամանի N 1 և N 2 հավելվածները շարադրվել են նոր խմբագրությամբ, իսկ Հրամանը լրացվել է N 3 հավելվածով:

Չօգտագործված կանխավճարների վերադարձի դիմումը ներկայացվում է էլեկտրոնային համակարգով, իսկ համակարգի խափանման դեպքում՝ թղթային եղանակով: Համակարգի վերականգնումից հետո թղթային դիմումի էլեկտրոնային տեսքը 5 աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրվում է համակարգ:

Մերժման հիմքերի բացակայության դեպքում կանխավճարի գումարը վերադարձվում է դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ դիմումում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով, իսկ մերժման հիմքերի առկայության դեպքում վերադարձը մերժվում է 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Ավել վճարված կամ բռնագանձված պարտավորությունների գումարների վերադարձի դեպքում, եթե պարտավորության ձևավորման հիմք հանդիսացող մաքսային փաստաթուղթն արդեն ներկայացված է մաքսային մարմին, առանձին դիմում ներկայացնելու անհրաժեշտություն չի առաջանում: Եթե միաժամանակ պահանջվում է նաև չօգտագործված կանխավճարների վերադարձ, ներկայացվում է համապատասխան դիմում:

34. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2023 թվականի հունիսի 12-ի թիվ 582-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	06.08.2026թ. N 839-Ն
Հրապարակումը	25.08.2026թ.
Ուժի մեջ է	26.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230039/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվել հարկային կամ մաքսային մարմնի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման մրցույթի անցկացման կարգն ու պայմանները սահմանող իրավական ակտը:

35. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը հերթերի կառավարման համակարգը հաստատելու և հերթերի կառավարման համակարգի և կուտակային կայանատեղիի կազմակերպման գործունեություն իրականացնողների էլեկտրոնային համակարգերի փոխազդեցության կարգը, հավաքագրվող և փոխանցվող տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	17.08.2026թ. N 874-Ն
Հրապարակումը	24.08.2026թ.
Ուժի մեջ է	25.08.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230003/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հերթերի կառավարման համակարգը, ինչպես նաև սահմանվել են հերթերի կառավարման համակարգի և կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների էլեկտրոնային համակարգերի փոխազդեցության կարգը և հերթերի կառավարման համակարգ փոխանցվող տեղեկությունների ցանկը:

Համակարգը կիրառվում է պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով ՀՀ-ից մեկնող բեռնատար տրանսպորտային միջոցների նկատմամբ և հնարավորություն է տալիս կարգավորել դրանց հոսքը՝ տրանսպորտային միջոցների ինքնաշխատ կամ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից կանչի միջոցով: Ինքնաշխատ կանչի դեպքում հաշվի են առնվում տրանսպորտային միջոցների՝ օրենսդրությամբ սահմանված առաջնահերթությունը և կուտակային կայանատեղի մուտք գործելու հերթականությունը:

Սահմանվել է հերթերի կառավարման համակարգի և կուտակային կայանատեղիների էլեկտրոնային համակարգերի միջև իրական ժամանակում տվյալների փոխանակումը՝ API-ի միջոցով, ինչպես նաև առաջնահերթություն ունեցող և խմբում ընդգրկված տրանսպորտային միջոցների կանչի կարգը՝ «Առաջինը մուտք – Առաջինը ելք» սկզբունքի հիման վրա:

Համակարգով սահմանվել են տրանսպորտային միջոցների շարժի «Հերթագրված», «Կանչված», «Ներկայացած», «Սպասարկման մեջ», «Ավարտված» և «Կայանատեղիից դուրս եկած» կարգավիճակները, դրանց ձևավորման և փոփոխման կարգը:

Նախատեսվել է ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում կուտակային կայանատեղիների զբաղվածության, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների, մուտքի և ելքի տվյալների, շարժի կարգավիճակի, ինչպես նաև կանչման հնարավոր և փաստացի ժամերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում: Միաժամանակ, համակարգը պետք է ապահովի տրանսպորտային միջոցների հերթի միջին սպասման տևողության հաշվարկի, վիճակագրական և վերլուծական հաշվետվությունների ձևավորման հնարավորություն:

36. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը «մինչև «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի ավարտը, «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ ֆիզիկական անձանց առաքման նպատակով էլեկտրոնային առևտրի օպերատորի տարածքներից կամ շինություններից դրանց դուրսբերման նպատակով էլեկտրոնային առևտրի օպերատորի կողմից մաքսային մարմնին տրամադրվող ծանուցման ձևը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	20.08.2026թ. N 888-Ն
Հրապարակումը	25.08.2026թ.
Ուժի մեջ է	ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 4-ի ՀՕ-84-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230065/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել է էլեկտրոնային առևտրի օպերատորի կողմից մաքսային մարմնին ներկայացվող ծանուցման ձևը՝ «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները մինչև ընթացակարգի ավարտը ֆիզիկական անձանց առաքելու նպատակով օպերատորի տարածքից կամ շինությունից դուրս բերելու դեպքում:

Ծանուցման ձևում սահմանվել են ներկայացվող հիմնական տվյալները՝ օպերատորի անվանումը և ռեեստրում գրանցման համարը, ապրանքը ստացող ֆիզիկական անձի տվյալները, ապրանքի ձեռքբերման գործարքը հաստատող փաստաթղթի տվյալները, ապրանքի դուրսբերման ամսաթիվը, ինչպես նաև յուրաքանչյուր ապրանքի մաքսային հայտարարագրի համարը, նկարագրությունը, ԱՏԳ ԱԱ 10-նիշ ծածկագիրը, գտնվելու և առաքման վայրերի հասցեները:

Ապրանքի վերադարձի դեպքում ծանուցման մեջ ներառվում են վերադարձման ամսաթիվը, վերադարձը հաստատող փաստաթղթի տվյալները, վերադարձի մասին ծանուցման ամսաթիվը և վերադարձված ապրանքների պահեստային տարածքի հասցեն:

37. Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը մաքսային անձնական հաշվի քարտի ստեղծման և վարման կարգը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	20.08.2026թ. N 889-Ն
Հրապարակումը	25.08.2026թ.
Ուժի մեջ է	ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230066/latest

Համառոտ նկարագիր

Սահմանվել է մաքսային անձնական հաշվի քարտի ստեղծման և վարման կարգը, որով կարգավորվել են մաքսային պարտավորությունների, դրանց մարումների և մաքսային միասնական հաշվին կանխավճարների հաշվառման գործընթացները:

Սահմանվել են մաքսային պարտավորությունների առաջացման, հաշվառման, ճշգրտման և մարման կարգն ու ժամկետները, այդ թվում՝ մաքսային փաստաթղթերի ճշգրտման, մաքսային ստուգման ակտերի և այլ վարչական ակտերի հիման վրա առաջացող պարտավորությունների հաշվառման առանձնահատկությունները:

Կարգավորվել են նաև ժամկետանց մաքսային պարտավորությունների նկատմամբ տույժերի հաշվարկման, պարտավորությունների ճշգրտման դեպքում տույժերի վերահաշվարկի, սահմանված չափից ավելի վճարված գումարների և վարչական տուգանքների վերահաշվարկի ու համապատասխան գումարների մաքսային միասնական հաշվին փոխանցման հարցերը: Հաստատվել է մաքսային անձնական հաշվի քարտի ձևը՝ համապատասխան տեղեկատվության հաշվառման համար:

38.Փաստաթուղթ	«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27-ի N 190-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	04.09.2026թ. N 941-Ն
Հրապարակումը	09.09.2026թ
Ուժի մեջ է	01.10.2026թ
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230825

Համառոտ նկարագիր

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27.06.2017թ. N190-Ն հրամանով հաստատված է ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության ձևը: Հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածում 06.05.2026թ. ՀՕ-234-Ն օրենքով կատարված փոփոխություններին համապատասխան՝ հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27.06.2017թ. N190-Ն հրամանում՝ այն համապատասխանեցնելով օրենսգրքի գործող դրույթներին:

Միաժամանակ, քանի որ օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան նոտարները համարվում են միայն ԱԱՀ վճարող, հայտարարության ձևից հանվել է նաև նոտար բառը:

39.Փաստաթուղթ	«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1061-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	09.09.2026թ. N 958-Ն
Հրապարակումը	11.09.2026թ.
Ուժի մեջ է	12.09.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/230913/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով կատարված փոփոխության և լրացման արդյունքում 3-րդ կետը լրացվել է նոր նախադասությամբ, որով սահմանվել է, որ նշված ժամկետից հետո հաշվառումից հանման ենթակա հարկ վճարողների հայտնաբերման դեպքում հարկային մարմինը համապատասխան տեղեկությունները ստանալու նպատակով հարցումները կատարում է հայտնաբերելու օրվան հաջորդող մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Միաժամանակ, 4-րդ կետում «2-րդ» բառը փոխարինվել է «3-րդ» բառով:

40. Փաստաթուղթ	«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 326-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	23.09.2026թ. N 995-Ն
Հրապարակումը	29.09.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231490/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 25.09.2017թ. N326-Ն հրամանը համապատասխանեցվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 03.07.2026թ. ՀՕ-385-Ն օրենքով կատարված փոփոխություններին:

Մասնավորապես, ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ձևը լրացվել է 5-րդ բաժնով, որը վերաբերում է բանկերի թողարկած և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից կամ բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասից, փայաբաժնից ռեզիդենտ կազմակերպություններին վճարման ենթակա շահաբաժիններին, այդ շահաբաժիններից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկին:

41. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 298-ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	24.09.2026թ. N 1000-Ն
Հրապարակումը	29.09.2026թ.
Ուժի մեջ է	01.01.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231429/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 30.12.2016թ. N298-Ն հրամանով հաստատված է ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ձևը և լրացման կարգը: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում 04.03.2026թ. ՀՕ-83-Ն և 06.05.2026թ. ՀՕ-234-Ն օրենքներով կատարված փոփոխություններով պայմանավորված, որոնք ուժի մեջ են մտնելու 2027թ. հունվարի 1-ից, փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 30.12.2016թ. N298-Ն հրամանում՝ այն համապատասխանեցնելով օրենսգրքով սահմանված դրույթներին: Հրամանով կատարված փոփոխություններով՝

- գործարքի ճշգրտման հետ կապված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ձևում և լրացման կարգում նախատեսվել են կարգավորումներ հաշիվ վավերագրով և ՀԴՄ կտրոններով ապրանքների վերադարձի դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով հարկման բազաների և հարկային պարտավորությունների արտացոլման հետ կապված,

- ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակներով ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ապրանքների մատակարարման հետ կապված առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի հարկային պարտավորությունների արտացոլման հետ կապված միասնական հաշվարկի ձևում և լրացման կարգում կատարվել են համապատասխան լրացումներ: Մասնավորապես, միասնական հաշվարկի ձևը լրացվել են 14.1-ին և 14.2-րդ կետերով, որոնք լրացվում են առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից: Ընդ որում, միասնական հաշվարկի 14.1-ին կետում լրացվում է առևտրի էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց ապրանքների մատակարարման մասով տեղեկատվությունը, իսկ միասնական հաշվարկի 14.2-րդ կետում՝ օրենսգրքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում ապրանքների վերադարձի մասով համապատասխան տեղեկատվությունը,

- միասնական հաշվարկի լրացման կարգի 21-րդ կետի փոփոխությամբ սահմանվել է, որ միասնական հաշվարկի 17-րդ կետում արտացոլվելու է օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում՝ առևտրի էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մատակարարված՝ ՀՀ տարածք ներմուծված ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների հարկման բազան և ԱԱՀ-ի գումարը:

Միաժամանակ, ուժը կորցրած են ճանաչվել միասնական հաշվարկի ձևում և լրացման կարգում նախատեսված օրենսգրքի 79-րդ հոդվածին վերաբերող կարգավորումները:

42. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի N 558-ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	24.09.2026թ. N 1001-Ն
Հրապարակումը	29.09.2026թ.

Ուժի մեջ է	01.02.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231487/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով կատարված լրացումների արդյունքում ընդլայնվել է հայտարարության համապատասխան կետում նշվող գործունեության տեսակների շրջանակը՝ ներառելով ռիելթորական և անշարժ գույքի կառավարման ծառայությունները:

Միաժամանակ, հայտարարության ձևում նախատեսվել է նոր հավաստում, որով հայտարարատուն հաստատում է, որ բանկի մասնակից (բաժնետեր) հանդիսացող կազմակերպություն չէ:

43. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27-ի N 191-ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	24.09.2026թ. N 1002-Ն
Հրապարակումը	29.09.2026թ.
Ուժի մեջ է	01.02.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231488/latest

Համառոտ նկարագիր

Հրամանով կատարված լրացման արդյունքում՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևում նախատեսվել է նոր 7-րդ ենթակետ, որով հայտարարություն ներկայացնող կազմակերպությունը պետք է նշի, որ չի համարվում բանկի մասնակից (բաժնետեր) հանդիսացող կազմակերպություն:

44. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 300-ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	25.09.2026թ. N 1003-Ն
Հրապարակումը	29.09.2026թ.
Ուժի մեջ է	01.12.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/231489/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N1, N3, N4 և N5 հավելվածները համապատասխանեցվել են 13.11.2025թ. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-391-Ն և 03.07.2026թ. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-385-Ն օրենքներով կատարված փոփոխություններին: Մասնավորապես, համապատասխան ձևերում նախատեսվել է՝

- բանկերի թողարկած և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից կամ բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասից, փայաբաժնից 2027 թվականի փետրվարի 1-ից ստացվող շահաբաժինների մասով եկամտային հարկի հաշվարկումը 15% դրույքաչափով,

- կառավարման հանձնված անշարժ գույքի հետ կապված գործարքներից եկամուտների մասով եկամտային հարկի հաշվարկումը 10% դրույքաչափով:

Միաժամանակ, կրիպտոակտիվների օտարումից եկամուտները եկամտային հարկի ամսական հաշվարկում արտացոլելու նպատակով նախատեսվել է առանձին տող:

2. Եվրասիական տնտեսական միության օրենսդրության նորություններ

2.1 <u>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներ</u>

1. Փաստաթուղթ	«Օպտիկական ապակուց ձողերի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	14.07.2026թ. N 93
Հրապարակումը	17.07.2026թ.
Ուժի մեջ է	պաշտոնական հրապարակումից 30 օրացուցային օր հետո, որոշման 3-րդ կետում նշված իրավական ակտերի ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ շուտ

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԱՏԳ ԱԱ 7002 20 100 0 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ սահմանվել է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 31.12.2027թ. ներառյալ:

2. Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի և Մաքսային միության հանձնաժողովի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	21.07.2026թ. N 95
Հրապարակումը	23.07.2026թ.
Ուժի մեջ է	22.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԱՏԳ ԱԱ 7202 93 000 0 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ սահմանվել է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 29.02.2028թ. ներառյալ

3. Փաստաթուղթ	«Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված և որպես մաքսային հայտարարագրեր օգտագործվող միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը 28.07.2026թ. N 97
Հրապարակումը 31.07.2026թ.
Ուժի մեջ է 30.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված՝ որպես տարանցման հայտարարագիր, ապրանքի հայտարարագիր և ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործվող փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերի ցանկը:

4. Փաստաթուղթ «Տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը որպես ապրանքների հայտարարագիր օգտագործելու կարգի մասին ուղեցույցի 12-րդ կետում փոփոխություն կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը 28.07.2026թ. N 99
Հրապարակումը 31.07.2026թ.
Ուժի մեջ է 10.08.2026թ..

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հնարավորություն է տրվել Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP17)՝ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպման և անցկացման համար նախատեսված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխվող հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների մաքսային ձևակերպման ժամանակ ապրանքներն ունեցող փաստաթղթերն օգտագործել որպես մաքսային հայտարարագիր:

5. Փաստաթուղթ «Տիտանի ջարդոնի և թափոնիների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը 11.08.2026թ. N 102
Հրապարակումը 14.08.2026թ.
Ուժի մեջ է 10.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԱՏԳ ԱԱ 8108 30 100 0 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ սահմանվել է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 31.08.2028թ.:

6. Փաստաթուղթ	«Մանգանի հանքաքարերի և խտանյութերի, ներառյալ՝ չոր արտադրանքի հաշվարկով 20 % զանգվ. կամ ավելի մանգանի պարունակությամբ երկաթային մանգանային հանքաքարերի և խտանյութերի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	11.08.2026թ. N 104
Հրապարակումը	14.08.2026թ.
Ուժի մեջ է	24.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԱՏԳ ԱԱ 2602 00 000 0 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ սահմանվել է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 31.08.2028թ.:

7. Փաստաթուղթ	«Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից ծագող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների նկատմամբ 2027 թվականի համար սակագնային քվոտայի ծավալները սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	25.08.2026թ. N 109
Հրապարակումը	28.08.2026թ.
Ուժի մեջ է	27.09.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից ծագող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների նկատմամբ 2027 թվականի համար սակագնային քվոտայի ծավալները: Նշված սակագնային քվոտան կիրառվելու է «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող երկարահատիկ բրնձի նկատմամբ:

8. Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ 2027 թվականի համար սակագնային քվոտաներ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներ ներմուծվող այդ ապրանքների նկատմամբ սակագնային քվոտաների ծավալներ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	25.08.2026թ. N 110
Հրապարակումը	28.08.2026թ.
Ուժի մեջ է	27.09.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ 2027 թվականի համար սակագնային քվոտաները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներ ներմուծվող այդ ապրանքների նկատմամբ սակագնային քվոտաների ծավալները՝ համաձայն որոշման հավելվածի: Նշված սակագնային քվոտաները կիրառվելու է «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող նշված հավելվածով սահմանված գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ:

9. Փաստաթուղթ	«Ալյումինային նիոբիումի խառնուրդի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային միասնական անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	25.08.2026թ. N 112
Հրապարակումը	28.08.2026թ.
Ուժի մեջ է	08.10.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկից բացառվել է ԱՏԳ ԱԱ 8112 92 410 0 ծածկագիրը և լրացվել են ԱՏԳ ԱԱ 8112 92 410 1 և 8112 92 410 9 ծածկագրերով: Միաժամանակ ԱՏԳ ԱԱ 8112 92 410 1 ծածկագրի համար սահմանվել է ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 31.10.2028թ., իսկ ԱՏԳ ԱԱ 8112 92 410 9 ծածկագրին դասվող ապրանքների համար սահմանվել է ներմուծման մաքսատուրքի 10 տոկոս դրույքաչափ՝ առանց կիրառման ժամկետի սահմանափակման:

10. Փաստաթուղթ	«Արաբական Միացյալ Էմիրությունների ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափերի կիրառման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	25.08.2026թ. N 113
Հրապարակումը	28.08.2026թ.
Ուժի մեջ է	06.10.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել են այն առանձին ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ մյուս կողմից, միջև տնտեսական գործընկերության մասին» 27.06.2025թ. համաձայնագրին համապատասխան ներմուծման մաքսատուրքի դրույքաչափեր, ինչպես նաև այդ ցանկում նշված ապրանքների համար համապատասխան դրույքաչափերը: Համաձայն որոշման՝ Արաբական Միացյալ Էմիրությունների ծագում ունեցող ապրանքների՝ նշված համաձայնագրին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման դեպքում կիրառվում է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ, բացառությամբ՝ նշված ցանկում ներառված ապրանքների: Ընդ որում, եթե ապրանքի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական սակագնով հաշվարկված մաքսատուրքի գումարը ավելի ցածր է նշված ցանկով հաշվարկված ներմուծման մաքսատուրքի գումարից, ապա կիրառվում է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը:

11. Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 26.11.2025թ. N 110 որոշման 2-րդ հավելվածում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը	08.09.2026թ. N 119
Հրապարակումը	10.09.2026թ.
Ուժի մեջ է	10.10.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 26.11.2025թ. N 119 որոշման 2-րդ հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներ ներմուծվող Իրանի Իսլամական Հանրապետության ծագում ունեցող առանձին ապրանքների նկատմամբ 2026-2027 թվականների սակագնային քվոտաների ցանկը լրացվել է առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքներով՝ դրանց համար սահմանելով համապատասխան սակագնային քվոտաներ՝ որոշման հավելվածին համապատասխան:

2.2 <u>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումներ</u>

12. Փաստաթուղթ	«Վառելիքի և օրգանական քիմիական միացությունների առանձին տեսակների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	01.07.2026թ. N 69
Հրապարակումը	01.07.2026թ.
Ուժի մեջ է	11.07.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ է սահմանվել ԱՏԳ ԱԱ 2710 12 411 0, 2710 12 412 0, 2710 12 419 0, 2710 12 450 0, 2710 12 490 0, 2710 12 510 0, 2710 12 590 0, 2710 19 210 0, 2710 12 421 0, 2710 12 422 0, 2710 12 423 0, 2710 12 424 0, 2710 12 425 0, 2710 19 426 0, 2710 12 429 0 ծածկագրերին դասվող վառելիքի առանձին տեսակների նկատմամբ՝ 2026 թվականի հուլիսի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ը, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2909 19 100 0 և 2909 19 900 0 ծածկագրերին դասվող առանձին ապրանքների նկատմամբ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 2027 թվականի հունիսի 30-ը:

13. Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2019 թվականի մարտի 29-ի N 23 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	09.07.2026թ. N 70
Հրապարակումը	29.07.2026թ.
Ուժի մեջ է	08.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP17)՝ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպման և անցկացման համար նախատեսված ապրանքների ներմուծման և դրանց արտահանման դեպքում վերջիններս կարող են ձևակերպվել հատուկ մաքսային ընթացակարգով՝ պահպանելով նույն որոշմամբ սահմանված պայմանները: Որոշմամբ սահմանվել է նաև այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ նշված որոշմամբ սահմանված իրավակարգավորումները չեն տարածվում, այդ թվում՝ ենթաակցիզային ապրանքները, այն ապրանքները, որոնց ներմուծումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք և (կամ) արտահանումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արգելվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2015

թվականի ապրիլի 21-ի N 30 որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև նշված որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ ներմուծման և (կամ) արտահանման համար սահմանափակումների ենթակա ապրանքները, բացառությամբ նշված որոշման 2.16-րդ, 2.17-րդ և 2.19-րդ բաժիններում ընդգրկված ապրանքների

14. Փաստաթուղթ	«Ապրանքների և (կամ) ապրանքների կատեգորիաների, դեպքերի և (կամ) պայմանների ցանկի մասին, որոնց դեպքում ապրանքների փոխադրումը «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ենթակա չէ նավիգացիոն կապարակնիքներով հետագծման» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	09.07.2026թ. N 71
Հրապարակումը	29.07.2026թ.
Ուժի մեջ է	08.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է այն ապրանքների և (կամ) ապրանքների կատեգորիաների, դեպքերի և (կամ) պայմանների ցանկը, որոնց դեպքում ապրանքների փոխադրումը «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ենթակա չէ նավիգացիոն կապարակնիքներով հետագծման: Միաժամանակ, ցանկի 16-րդ կետով սահմանված ապրանքների համար (անդամ պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցներով փոխադրվող ապրանքներ, որոնց համար լիազորված տնտեսական օպերատորը հետագծման (փոխադրման) ամբողջ ընթացքում հանդիսանում է հայտարարատու և միաժամանակ փոխադրող) նորմը կիրառվում է մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:

15. Փաստաթուղթ	«Տիտանի օքսիդների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	09.07.2026թ. N 76
Հրապարակումը	07.08.2026թ.
Ուժի մեջ է	17.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ է սահմանվել ԱՏԳ ԱԱ 2823 00 000 0 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 2028 թվականի հոկտեմբերի 31-ը:

16. Փաստաթուղթ	«Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի N 130 որոշման 7-րդ կետի 7.1.81 ենթակետում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	09.07.2026թ. N 79
Հրապարակումը	07.08.2026թ.
Ուժի մեջ է	17.08.2026թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի N 130 որոշման 7-րդ կետի 7.1.81 ենթակետում, որով ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 7 8703 80 000 5 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների ներմուծման համար նախատեսված սակագնային արտոնության 2026 թվականի ծավալը Հայաստանի Հանրապետության համար 15 հազար հատ քանակն ավելացվել է 5 հազար հատ քանակով՝ ընդհանուր կազմելով 20 հազար հատ, իսկ Ղրղզստանի Հանրապետության համար ավելացվել է 10 հազար հատով՝ ընդհանուր կազմելով 25 հազար հատ: